



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-15040**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 192-րդ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/111-Ա**

**ՓԱՍՏԱՐԱՆ ԳԱԳԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Մեծլումյանի,

Քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի

Քննության առնելով փաստաբան Գագիկ Նալբանդյանին (արտոնագիր թիվ 365) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

ՀՀ Փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ-ին Պալատի Նախագահին է ներկայացրել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Գագիկ Նալբանդյանը (արտոնագիր թիվ 365) 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի պարտավորություն:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի առաջին տեղակալի 01.06.2015թ. թիվ 125-Ա/ԿԳ-15040 որոշմամբ փաստաբան Գագիկ Նալբանդյանի (արտոնագիր թիվ 365) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

02.06.2015թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը նշանակվել է 2015 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 19:26-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **3. Պատասխանողի համառոտ բացատրությունը.**

Նիստի օրվա և ժամի մասին փաստային և էլեկտրոնային հասցեներով ծանուցվել է փաստաբան Գագիկ Նալբանդյանը, սակայն նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

### **4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- 1) Փաստաբան Գագիկ Նալբանդյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.03.1999թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքով)
- 2) Փաստաբան Գագիկ Նալբանդյանը ունի 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով)
- 3) Փաստաբան Գագիկ Նալբանդյանը 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի պարտքն ամբողջությամբ վճարել է (հաստատվում է ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահ Այդա Աբրահամյանի կողմից 25.09.2015թ. տրամադրված տեղեկանքով):

### **5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Գագիկ Նալբանդյանի (արտոնագիր թիվ 365 ստացած 16.03.1999թ.) նկատմամբ 2006-2015թթ ընկած ժամանակահատվածում 7 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու համար՝

- Պալատի Խորհրդի 28.12.2006թ թիվ 22/7 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն, տույժը մարվել է,
- Պալատի Խորհրդի 29.02.2008թ թիվ 3/10 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է՝ արտոնություն կիրառելու հիմքով,
- Պալատի Խորհրդի 12.11.2008թ թիվ 22/6 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողություն, տույժը մարվել է,
- Պալատի Խորհրդի 07.07.2009թ թիվ 16/2 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն, տույժը մարվել է,
- Պալատի Խորհրդի 14.08.2009թ թիվ 18/5 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողություն, տույժը մարվել է,
- Պալատի Խորհրդի 13.11.2009թ թիվ 28/6 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է՝ արտոնություն կիրառելու հիմքով,

- Պալատի խորհրդի 09.11.2010թ թիվ 30/5 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է՝ արտոնություն կիրառելու հիմքով:

**6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գագիկ Նալբանդյանի (արտոնագիր թիվ 365) նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:

ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր ղեկարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ-ի տեղեկանքից և դրան կից հավելվածից հետևում է, որ փաստաբան Գագիկ Նալբանդյանի (արտոնագիր թիվ 365) նկատմամբ նախկինում չի կիրառվել Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ և 39.9-րդ հոդվածներով, Պալատի խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան՝ Գագիկ Նալբանդյանի (արտոնագիր թիվ 365) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ հիմքով:**

**2. Պալատի աշխարակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկելու փաստաբան Գագիկ Նալբանդյանին:**

**Ծանոթություն՝** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նիստը նախագահող՝**

**Լիպարիտ Սիմոնյան**